Հաստատված է

Խաչատուր Աբովյանի անվան հայկական

պետական մանկավարժական համալսարանի

գիտական խորհրդի 2014թ. հոկտեմբերի 29-ի նիստում

Գիտական խորհրդի նախագահ,

Ռեկտոր Ռուբեն Միրզախանյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ

1.Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում (այսուհետ՝ Համալսարան) երկրորդ մագիստրոսական կրթական աստիճանը ստանալու կարգը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ:

2.Սույն կանոնակարգը սահմանում է Համալսարանում երկրորդ մագիստրոսկան կրթական աստիճան ստանալու հատուկ պայմանները:

3.Երկրորդ մագիստրոսական կրթական աստիճան ստանալու համար դիմած անձն ազատվում է իր նախորդ մագիստրոսական աստիճանի կրթական ծրագրի շրջանակներում ուսումնասիրած և տվյալ կրթական ծրագրում առկա առարկաներից՝ համապատասխան կրեդիտների առկայության դեպքում: Անձը հաճախում է նախկինում ուսումնասիրած առարկաներին, եթե իր ուսումնասիրած և նոր կրթական ծրագրի շրջանակներում առկա է տվյալ առարկայի 25 տոկոսի կրեդիտների տարբերություն:

4.Երկրորդ մագիստրոսական կրթական աստիճանում սովորող ուսանողը պարտավոր է վճարել միայն այն առարկաների ուսումնական պարապմունքների համար, որոնց հաճախելու է, ըստ Համալսարանում տվյալ մասնագիտության համար գործող մեկ կրեդիտի արժեքի:

5.Երկրորդ մագիստրոսական կրթություն ստանալը իրականացվում է միայն վճարովի սկզբունքով:

6.Նախորդ մագիստրոսական աստիճանի կրթական ծրագրի շրջանակներում ուսումնասիրած և տվյալ կրթական ծրագրում առկա առարկաներից կուտակած կրեդիտները և դրանց գահատականները ենթակա են փոխանցման՝ գրանցվելով երկրորդ մագիստրոսական աստիճանի դիպլոմի հավելվածում: